Հասարակական նշանակության օբյեկտների նկատմամբ իրականացված գործարքների քանակն ըստ ԼՂՀ շրջանների

/ միավոր/

**ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

	Օտարումների քանակը, ընդամենը	այդ թվում՝		
		առուվաճառք	նվիրատվություն	փոխանակություն
ք.Ստեփանակերտ	68	39	18	11
Ասկերան	18	15	3	-
Հաղրուք	8	5	3	-
Մարտակերտ	9	8	1	-
Մարտունի	7	4	3	-
Շահումյան	-	-	-	-
Շուշի	7	6	1	-
Քաշաթաղ	5	5	0	-
<b>Ընդամենը ԼՂՀ</b>	<b>122</b>	<b>82</b>	<b>29</b>	<b>11</b>

*Արտադրական նշանակության օբյեկտների նկատմամբ իրականացված գործարքների քանակն ըստ ԼՂՀ շրջանների*

/միավոր/

	Օտարումների քանակը, ընդամենը	այդ թվում՝		
		առուվաճառք	նվիրատվություն	փոխանակություն
ք.Ստեփանակերտ	9	6	3	-
Ասկերան	7	7	-	-
Հաղրուք	2	1	1	-
Մարտակերտ	5	4	1	-
Մարտունի	1	1	-	-
Շահումյան	-	-	-	-
Շուշի	1	1	-	-
Քաշաթաղ	4	3	1	-
<b>Ընդամենը ԼՂՀ</b>	<b>29</b>	<b>23</b>	<b>6</b>	<b>-</b>

*Հողերի (այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության) նկատմամբ իրականացված գործարքների քանակն ըստ ԼՂՀ շրջանների*

/միավոր/

	Օտարումների քանակը, ընդամենը	այդ թվում՝		
		առուվաճառք	նվիրատվություն	փոխանակություն
ք.Ստեփանակերտ	292	242	48	2
Ասկերան	177	145	30	2
Հաղրուք	36	24	10	2
Մարտակերտ	120	110	10	-
Մարտունի	93	85	8	-
Շահումյան	28	28	-	-
Շուշի	72	66	3	3
Քաշաթաղ	37	36	1	-
<b>Ընդամենը ԼՂՀ</b>	<b>855</b>	<b>736</b>	<b>110</b>	<b>9</b>

*Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ իրականացված գործարքների քանակն ըստ ԼՂՀ շրջանների*

/միավոր/

	Օտարումների քանակը, ընդամենը	այդ թվում՝		
		առուվաճառք	նվիրատվություն	փոխանակություն
ք.Ստեփանակերտ	2	2	-	-
Ասկերան	62	45	15	2
Հաղրուք	20	10	8	2
Մարտակերտ	57	45	3	9
Մարտունի	27	20	7	-
Շահումյան	1	1	-	-
Շուշի	1	1	-	-
Քաշաթաղ	3	3	-	-
<b>Ընդամենը ԼՂՀ</b>	<b>173</b>	<b>127</b>	<b>33</b>	<b>13</b>

2014թ. հանրապետությունում այգետնակների (ամառանոցների) նկատմամբ գործարքներ չեն իրականացվել:

**ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ  
5.17. Կրթություն**

**5.17.1. Հանրակրթական դպրոցների գործունեությունը**

2014/2015 ուսումնական տարում հանրապետությունում գործում են 219 ցերեկային հանրակրթական դպրոցներ, վարժարաններ և հանրակրթական ծրագրեր իրականացնող այլ հիմնարկներ: Դպրոցների ընդհանուր թվի 87.2 տոկոսը կամ 191-ը՝ գտնվում են գյուղական բնակավայրերում և 12.8 տոկոսը կամ 28-ը՝ քաղաքային բնակավայրերում:

*Դպրոցների թվի դինամիկան ըստ շրջանների*

	2011/2012 ուսումնական տարի		2012/2013 ուսումնական տարի		2013/2014 ուսումնական տարի		2014/2015 ուսումնական տարի	
	դպրոցների թիվը	դպրոցների թիվը 10 000 բնակչի հաշվով	դպրոցների թիվը	դպրոցների թիվը 10 000 բնակչի հաշվով	դպրոցների թիվը	դպրոցների թիվը 10 000 բնակչի հաշվով	դպրոցների թիվը	դպրոցների թիվը 10 000 բնակչի հաշվով
<b>Ընդամենը</b>	<b>218</b>	<b>15</b>	<b>219</b>	<b>15</b>	<b>219</b>	<b>15</b>	<b>219</b>	<b>15</b>
ք.Ստեփանակերտ	14	3	14	3	14	3	14	3
Ասկերան	33	18	32	18	32	18	32	18
Նադրութ	25	20	25	19	25	18	25	18
Մարտակերտ	36	18	36	18	36	18	35	18
Մարտունի	36	15	36	15	36	15	36	15
Շահումյան	16	55	16	53	16	52	16	52
Շուշի	9	17	9	16	9	16	9	17
Քաշաթաղ	49	58	51	59	51	55	52	56

2014/2015 ուստարում հանրապետությունում դպրոցների միջին թիվը 10000 բնակչի հաշվով կազմել է 15 և ըստ հանրապետության շրջանների տատանվում է 3-ից մինչև 56:

**Ուսուցիչների քվաքանակը**

2014/2015 ուստարում հանրակրթական դպրոցներում դասավանդում է 4751 ուսուցիչ: Ուսուցիչների 83.0 տոկոսը կամ 3945-ը՝ կանայք են, 17.0 տոկոսը կամ 806-ը՝ տղամարդիկ: Միևնույն ժամանակ, տնօրենների ընդհանուր քվաքանակից միայն 53.4 տոկոսն են կանայք, ընդ որում, գյուղական բնակավայրերում՝ 52.6 տոկոսը և քաղաքային բնակավայրերում՝ 58.1 տոկոսը: Ուսուցիչների 71.8 տոկոսը դասավանդում է գյուղական բնակավայրերում (կին ուսուցիչների՝ 69.4 տոկոսը):

Ուսուցիչների քվաքանակի ուսումնասիրությունն ըստ աշխատանքային ստաժի ցույց է տալիս, որ նրանց 10.8 տոկոսն ունի մինչև 3 տարվա աշխատանքային ստաժ, 33.9տոկոսը՝ 3–10 տարվա և 55.3 տոկոսը՝ 10 տարուց ավելի, ընդ որում գյուղական բնակավայրերում ուսուցիչների 12.1 տոկոսն ունի մինչև 3 տարվա աշխատանքային ստաժ, 37.5 տոկոսը՝ 3–10 տարվա և 50.4 տոկոսը՝ 10 տարուց ավելի, քաղաքային բնակավայրերում, համապատասխանաբար, 7.5, 24.6 և 67.9 տոկոսը:

*Ուսուցիչների քվաքանակի բաշխվածությունն ըստ աշխատանքային ստաժի*

Աշխատանքային ստաժը	Ընդամենը	այդ թվում՝ կանայք	Քաղաքային բնակավայրերում		Գյուղական բնակավայրերում	
			Ընդամենը	այդ թվում՝ կանայք	Ընդամենը	այդ թվում՝ կանայք
մինչև 3 տարին	514	426	101	94	413	332
3-10 տարի	1608	1264	329	297	1279	967
10 տարուց ավելի	2629	2255	909	818	1720	1437
<b>Ընդամենը</b>	<b>4751</b>	<b>3945</b>	<b>1339</b>	<b>1209</b>	<b>3412</b>	<b>2736</b>

**Հանրակրթությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ շրջանների  
2014/2015 ուսումնական տարում**

	Ընդամենը	այդ թվում՝							
		ք.Ստեփանակերտ	Ասկերան	Հաղրուօ	Մարտակերտ	Մարտունի	Շահումյան	Շուշի	Քաշաթաղ
Դպրոցների քանակը	<b>219</b>	14	32	25	35	36	16	9	52
Աշակերտների թվաքանակը <i>այդ թվում՝</i>	<b>21708</b>	7307	2287	1943	3283	3594	674	834	1786
տղաներ	<b>10659</b>	3446	1135	999	1606	1841	339	409	884
աղջիկներ	<b>11049</b>	3861	1152	944	1677	1753	335	425	902
քաղաքային վայրերում	<b>10978</b>	7307	255	524	812	802	110	660	508
գյուղական վայրերում	<b>10730</b>	-	2032	1419	2471	2792	564	174	1278
Աշակերտների ընդհանուր թվաքանակից սովորում են									
I– IV դասարան	<b>8559</b>	3026	855	738	1275	1306	280	341	738
V– IX դասարան	<b>9349</b>	3131	1019	772	1463	1570	272	385	737
X –XII դասարան	<b>3800</b>	1150	413	433	545	718	122	108	311
Միջին հաշվով մեկ դպրոց հաճախում են	<b>99</b>	522	71	78	94	100	42	93	34
Դասարանների քանակը	<b>2391</b>	324	367	311	365	441	167	69	347
Դասարանների քանակը մեկ դպրոցում	<b>11</b>	23	11	12	10	12	10	8	7
Միջին հաշվով մեկ դասարան հաճախում են	<b>9</b>	23	6	6	9	8	4	12	5
Մանկավարժների թվաքանակը	<b>4751</b>	827	688	550	808	918	234	162	564
Մանկավարժների ընդհանուր թվաքանակից ունեն կրթություն՝									
բարձրագույն	<b>4363</b>	790	657	477	746	884	169	148	492
թերի բարձրագույն	<b>104</b>	6	-	12	-	27	27	2	30
միջին մասնագիտական չունեն մասնագիտական կրթություն	<b>48</b>	6	-	13	5	1	8	-	15
Մեկ մանկավարժին ընկնող աշակերտների թվաքանակը	<b>5</b>	9	3	4	4	4	3	5	3
Մեկ դպրոցում աշխատող մանկավարժների թվաքանակը	<b>22</b>	59	22	22	23	26	15	18	11



**5.17.2. Միջին մասնագիտական կրթություն**

2014/2015 ուստարում հանրապետությունում գործում են 4 պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, որտեղ սովորում է 1964 ուսանող՝ նախորդ ուստարվա 2068-ի դիմաց:

2014/2015 ուսումնական տարում միջին մասնագիտական ուսումնական հաստատություններն ուսուցումն իրականացնում են պետպատվերով և վճարովի ուսուցմամբ:

2014/2015 ուստարում միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների ընդհանուր թվաքանակից 730-ը կամ 37.2 տոկոսը սովորում է անվճար և 1234-ը կամ 62.8 տոկոսը՝ վճարովի ուսուցմամբ:

*Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների բաշխվածությունն ըստ շրջանների 2014/2015 ուսումնական տարում*

	ՄՄՈՒՀ-ների քանակը	Ուսանողների թվաքանակը, ընդամենը	նրանցից՝ կանայք	այդ թվում՝							
				պետպատվեր		վճարովի		առկա		հեռակա	
				ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
<b>Ընդամենը</b>	<b>4</b>	<b>1964</b>	<b>931</b>	<b>730</b>	<b>324</b>	<b>1234</b>	<b>607</b>	<b>1692</b>	<b>866</b>	<b>272</b>	<b>65</b>
ք.Ստեփանակերտ	3	1766	811	598	259	1168	552	1658	853	206	10
Շուշի	1	198	120	132	65	66	55	34	13	66	55

*Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողների թվաքանակի շարժն ըստ մասնագիտությունների 2014/2015 ուսումնական տարում*

	Ընդունվել են		Ուսանողների թվաքանակը		Ավարտելու են ընթացիկ տարում	
	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
<b>Ընդամենը</b>	<b>486</b>	<b>244</b>	<b>1964</b>	<b>931</b>	<b>400</b>	<b>184</b>
Գյուղատնտեսություն	22	-	108	-	28	7
Տրանսպորտ և կապ	20	-	158	-	34	0
Տնտեսագիտություն	129	54	473	149	145	37
Առողջապահություն	140	121	551	454	108	83
Մանկավարժություն	10	10	66	65	16	16
Արվեստ	51	25	165	89	8	0
Այլ	114	34	443	174	61	41

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների 28.1 տոկոսը առողջապահության, 24.1 տոկոսը՝ տնտեսագիտության, 8.4 տոկոսը՝ արվեստի 5.5 տոկոսը՝ գյուղատնտեսության բնագավառի ապագա մասնագետներ են:

**5.17.3. Բարձրագույն կրթություն**

2014/2015 ուստարում հանրապետությունում գործում են 5 բարձրագույն ուսումնական հաստատություններ (այսուհետ՝ ԲՈՒՀ)՝ 2 պետական և 3 ոչ պետական, որտեղ սովորում է 4236 ուսանող, այդ թվում 3219-ը կամ 76.0 տոկոսը՝ պետական, իսկ 1017-ը կամ 24.0 տոկոսը՝ ոչ պետական ԲՈՒՀ-երում:

*Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների թվաքանակի շարժն ըստ ուսուցման ձևերի, 2014/2015 ու. տարի*

	Ընդունվել են, մարդ		Ուսանողների թվաքանակը, մարդ		Ավարտել են 2014թ., մարդ	
	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
<b>Ընդամենը</b>	<b>907</b>	<b>474</b>	<b>4236</b>	<b>2272</b>	<b>1156</b>	<b>636</b>
առկա ուսուցմամբ	440	278	1852	1274	603	412
հեռակա ուսուցմամբ	467	196	2384	998	553	224

**ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**  
**2014/2015 ուսումնական տարում**  
**ԲՈՒՀ-երի ուսանողների թվաքանակն ըստ մասնագիտությունների**

	Ընդունվել են		Ուսանողների թվաքանակը		Ավարտելու են ընթացիկ տարում	
	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
<b>Ընդամենը</b>	<b>907</b>	<b>474</b>	<b>4236</b>	<b>2272</b>	<b>1156</b>	<b>636</b>
Արդյունաբերություն և շինարարություն	50	3	228	9	35	3
Գյուղատնտեսություն	111	21	489	76	63	10
Տնտեսագիտություն	170	82	793	437	191	91
Մանկավարժություն	89	88	525	515	141	137
Իրավագիտություն	103	47	378	141	114	39
Բանասիրական	151	145	629	602	200	194
Պատմություն	57	32	303	150	88	47
Քիմիա և կենսաբանություն	15	15	152	126	52	41
Ֆիզմաթ	41	23	160	96	49	22
Ստոնոտոլոգիա	-	-	10	1	21	8
Նախնական զինվորական պատրաստում	74	2	403	26	135	8
Այլ	46	16	166	93	67	36

2014/2015 ուստարում ուսանողների 18.7 տոկոսն ապագա տնտեսագետներ են, 14.8 տոկոսը՝ քանասերներ, 12.4 տոկոսը՝ մանկավարժներ:

Ուսուցման հիմնական ձևը առկա է, հեռակա ուսուցման բաժանմունք ունեն 4 համալսարան:

Ուսանողների ընդհանուր թվաքանակից 737-ը ստանում է կրթաթոշակ, որից 10-ը՝ անվանական:

Վճարովի ուսուցմամբ սովորող 3495 ուսանողներից 6-ը՝ ուսման դիմաց վճարում է մինչև 100 հազ. դրամ, 269-ը՝ 101–200 հազ. դրամ, 2183-ը՝ 201–300 հազ. դրամ, 680-ը՝ 301–400 հազ. դրամ, 357-ը՝ 401–500 հազ. դրամ:

**5.17.4. Շարունակական և հետքուհական կրթություն**

**Մագիստրատուրա**

Ըստ ներկայացված հաշվետվությունների, 2015թ. հունվարի 1-ի դրությամբ մագիստրատուրայում սովորում է 716 մարդ, որից 508-ը՝ կանայք: Մագիստրատուրայում սովորողների 37.6 տոկոսը կամ 269 մարդ ուսանում է անվճար և 62.4 տոկոսը կամ 447-ը՝ վճարովի ուսուցմամբ: 2014թ. մագիստրատուրա է ընդունվել 332 մարդ, որից 235-ը՝ կանայք:

Մագիստրատուրայում սովորողների թվաքանակի ուսումնասիրությունն ըստ մասնագիտությունների ցույց է տալիս, որ առավելագույն տեսակարար կշիռ ունեն տնտեսագիտություն, իրավագիտություն և բանասիրական մասնագիտություններով սովորողները՝ համապատասխանաբար 24.3, 18.0 և 17.9 տոկոս:

**Ասպիրանտուրա**

2015թ. հունվարի 1-ի դրությամբ ԱրՊՀ-ի ասպիրանտուրայում սովորում են 49 մարդ՝ նախորդ տարվա 67-ի փոխարեն, որից 32-ը կանայք՝ նախորդ տարվա 46-ի փոխարեն:

Ասպիրանտուրայում սովորողների թվաքանակի ուսումնասիրությունն ըստ մասնագիտությունների ցույց է տալիս, որ առավելագույն տեսակարար կշիռ ունեն տնտեսագիտություն, պատմական և բանասիրական մասնագիտություններում սովորողները՝ համապատասխանաբար՝ 26.5, 20.4 և 16.3 տոկոսը:

**5.18. Մշակույթ և սպորտ**

**5.18.1. Համույթների գործունեությունը 2014թ.**

2014թ. հանրապետությունում գործել են 16 համերգային կազմակերպություն (այդ թվում ՄԵԿ-ի գործող 7 և Ստեփանակերտի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող 1 համույթներ), որոնցից 8-ը՝ Ստեփանակերտ քաղաքում:

Կոլեկտիվների ուժերով կազմակերպվել է 296 համերգ, իսկ այլ կոլեկտիվների հետ համատեղ՝ 45 համերգ: Հանրապետությունում կազմակերպված համերգներից ներկա է եղել 95.7 հազ. հանդիսատես: Համերգներից ստացված հասույթը կազմել է 7489.4 հազ. դրամ:

**Համույթների գործունեությունը 2013-2014թթ.**

	Համույթների թիվը		Համերգների քանակը		Հանդիսատեսների թվաքանակը, հազ. մարդ		Ստացված հասույթը, հազ. դրամ		Հանդիսատեսների թվաքանակը մեկ համերգի հաշվով, մարդ	
	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.
<b>Ընդամենը</b>	<b>16</b>	<b>16</b>	<b>482</b>	<b>341</b>	<b>85.2</b>	<b>95.7</b>	<b>4871.8</b>	<b>7489.4</b>	<b>177</b>	<b>281</b>

**ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

Նախորդ տարվա համեմատ համերգների թիվը նվազել է 29.3 տոկոսով, իսկ հանդիսատեսների թիվը՝ աճել է 12.3 տոկոսով, մեկ համերգի մասնակիցների թիվը՝ աճել է 58.8 տոկոսով:

**5.18.2. Թանգարանների գործունեությունը 2014թ.**

2014թ. հանրապետությունում գործել է 13 թանգարան, որից 3-ը՝ գտնվում է Ստեփանակերտ քաղաքում: Թանգարանների հիմնական ֆոնդերում հաշվառված է 62265 ցուցանմուշ (62.1 տոկոսը՝ ք.Ստեփանակերտում), դրանցից հաշվետու տարում ցուցադրվել է 20939-ը կամ ընդամենի 33.6 տոկոսը: Ընդ որում՝ ցուցադրված նմուշներից 90.7 տոկոսը ներկայացվել է մշտական ցուցադրություններում, 7.6 տոկոսը՝ ժամանակավոր, 1.0 տոկոսը՝ թանգարանից դուրս և 0.7 տոկոսը՝ այլ նպատակներով:

*Թանգարանների ֆոնդերի համառոտ բնութագիրը, 2014թ.*

Ցուցանմուշների տեսակը	Հիմնական ֆոնդերի ցուցանմուշների ընդհանուր քանակը	Ընդամենը	Դրանցից՝ ցուցադրվել են հաշվետու տարում			
			այդ թվում՝			
			մշտական ցուցադրություններ	ժամանակավոր ցուցադրություններ	այլ նպատակներով	թանգարանից դուրս
<b>Ընդամենը</b>	<b>62265</b>	<b>20939</b>	<b>19004</b>	<b>1593</b>	<b>139</b>	<b>203</b>
<i>այդ թվում՝</i>						
գեղանկարչության առարկաներ	723	388	324	59	-	5
զծանկարներ	196	149	132	17	-	-
քանդակներ	147	108	98	10	-	-
կիրառական արվեստի առարկաներ	1173	703	514	143	27	19
նումիզմատիկայի առարկաներ	3751	210	117	93	-	-
հնագիտական առարկաներ	4764	2146	1916	198	13	19
կենցաղի ազգագրական առարկաներ	2496	1275	1043	163	13	56
լուսանկարներ	20793	6316	5880	328	37	71
փաստաթղթեր	16204	3453	3372	63	18	-
այլ առարկաներ	12018	6191	5608	519	31	33

Հիմնական ֆոնդերի ցուցանմուշների 49.3 տոկոսը կամ 30695 միավոր անցել է գիտական մշակում, 1.9 տոկոսը կամ 1194 միավոր ենթակա է վերականգնման :

Թանգարանում աշխատողների 39.1 տոկոսը ունի բարձրագույն կրթություն, 17.4 տոկոսը կազմում է գիտական անձնակազմը:

*ԼՂՀ թանգարանների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ շրջանների*

Շրջաններ	Թանգարանների քանակը, ընդամենը	Հիմնական ֆոնդերի ցուցանմուշների ընդհանուր քանակը, միավոր	Ցուցադրված նմուշների քանակը, միավոր	Վերականգնված նմուշների քանակը, միավոր	Ժամանակավոր ցուցադրությունների քանակը	Այցելուների թվաքանակը, մարդ	Աշխատողների թվաքանակը, մարդ
<b>Ընդամենը</b>	<b>13</b>	<b>62265</b>	<b>20939</b>	<b>-</b>	<b>1593</b>	<b>80919</b>	<b>115</b>
ք.Ստեփանակերտ	3	38695	8090	-	360	48285	37
Ասկերան	1	350	350	-	-	348	2
Հաղրուք	1	7670	3054	-	385	5890	8
Մարտակերտ	2	966	423	-	-	6820	15
Մարտունի	3	2888	1246	-	589	4886	8
Շուշի	1	5969	2045	-	255	9754	26
Քաշաթաղ	2	5727	5731	-	4	4936	19

Թանգարանների հիմնական ֆոնդերի ցուցանմուշների ընդհանուր քանակը 2013թ. համեմատ ավելացել է 1806 միավորով կամ 3.0 տոկոսով, իսկ ցուցադրված նմուշների քանակը նվազել է 2204 միավորով կամ 9.5 տոկոսով: Այցելուների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 8.9 տոկոսով՝ կազմելով 80919 մարդ:

**5.18.3. Գրադարանների գործունեությունը 2014թ.**

2014թ. հանրապետությունում գործել է 1 հանրապետական և 9 հանրային գրադարան, այդ թվում՝ 1-ը մանկական:

*Գրադարանների քանակն ըստ տեսակների, 2014թ.*

Շրջան	Գրադարանների քանակը, ընդամենը	այդ թվում՝ ըստ տեսակների			
		հանրապետական	շրջանային	քաղաքային	մանկական
<b>Ընդամենը</b>	<b>10</b>	<b>1</b>	<b>7</b>	<b>1</b>	<b>1</b>
ք.Ստեփանակերտ	3	1	-	1	1
Ասկերան	1	-	1	-	-
Հաղրուք	1	-	1	-	-
Մարտակերտ	1	-	1	-	-
Մարտունի	1	-	1	-	-
Շահումյան	1	-	1	-	-
Շուշի	1	-	1	-	-
Քաշաթաղ	1	-	1	-	-

2015թ. հունվարի 1-ի դրությամբ գրքային ֆոնդը կազմել է 390130 օրինակ, որից 45.1 տոկոսը հանրապետական գրադարանի ֆոնդն է :

*Գրադարանների գրքային ֆոնդի շարժն ըստ բովանդակության, 2014թ.*

	Գրքային ֆոնդը, ընդամենը	ըստ բովանդակության				
		հասար. - քաղաք.	բնական և բժշկական	տեխնիկ. և գյուղատնտես.	արվեստ, ֆիզկուլտ. և սպորտ	բանասիր. և գեղարվեստ.
Գրքային ֆոնդը տարեսկզբին	388529 <sup>#</sup>	64025	16021	13977	13250	281256
Ստացվել է	2274	327	68	17	107	1755
Հանվել է	673	38	10	7	10	608
Գրքային ֆոնդը տարեվերջին	390130	64314	16079	13987	13347	282403
Տացքը	381464	100031	15184	23724	19257	223268

*Ընթերցողների թվաքանակի բաշխվածությունը ըստ սեռի և տարիքի*

Ընթերցողների թվաքանակը		ըստ տարիքի				
		15 տարեկան և ցածր	16-25 տարեկան	26-40 տարեկան	41-60 տարեկան	61 տարեկան և բարձր
Ընդամենը	<b>19537</b>	8093	6442	2462	1793	747
այդ թվում՝ կանայք	<b>13382</b>	4840	5104	1603	1304	531

2014թ. ընթերցողների թվաքանակը կազմել է 19537 մարդ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 697 մարդով կամ 3.4 տոկոսով: Կանայք կազմել են ընթերցողների 68.5 տոկոսը: Ընթերցողների ընդհանուր թվաքանակից 8093-ը հանդիսանում են մինչև 15 տարեկան երեխաները, 6442-ը՝ 16-25 տարեկան անձինք: Հաճախումների քանակը կազմել է 184914՝ նախորդ տարվա 196467-ի դիմաց: Ընթերցողների միջին թիվը 1000 բնակչի հաշվով կազմել է 131 մարդ: 2014թ. հանրապետության գրադարաններում աշխատել է 76 մարդ, որից 30-ը՝ ունեն բարձրագույն, 31-ը՝ միջին մասնագիտական կրթություն:

*Գրադարանների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ շրջանների, 2013-2014թթ.*

Շրջան	Գրքային ֆոնդը		Ընթերցողների թվաքանակը		Տացքը		Հաճախումների քանակը		Աշխատողների թվաքանակը	
	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.
<b>Ընդամենը</b>	<b>388529<sup>#</sup></b>	<b>390130</b>	<b>20234</b>	<b>19537</b>	<b>215200</b>	<b>381464</b>	<b>196467</b>	<b>184914</b>	<b>72</b>	<b>76</b>
ք.Ստեփանակերտ	270680	271677	13898	13112	95621	252447	140057	126464	31	32
Ասկերան	9635	9684	495	511	6227	6402	3524	3502	6	6
Հաղրուք	37166	36646	447	465	5455	4627	2946	3452	4	7
Մարտակերտ	21638	21944	750	790	52800	61930	19000	21226	7	7
Մարտունի	17108	17160	2260	2255	37858	38320	20508	20570	5	5
Շահումյան	4750	4870	145	156	1088	1649	960	585	1	1
Շուշի	18451	18994	1289	1298	5851	5889	6422	6095	9	9
Քաշաթաղ	9101	9155	950	950	10300	10200	3050	3020	9	9

**ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

2014թ. գրադարանների ֆինանսավորումը կատարվել է հիմնականում բյուջետային միջոցներով, ծախսերի ընդամենը 2.2 տոկոսն է ուղղվել գրադարանային ֆոնդի համալրմանը:

*Ֆինանսական միջոցների ստացումը և օգտագործումը*

Ընդամենը	Ֆինանսական միջոցների առկայությունը						Ընդամենը	Ֆինանսական ծախսեր							Ֆինանսական միջոցների մնացորդը տարեկանից	
	այդ թվում՝							այդ թվում՝								
	մնացորդը տարեկանից՝	ֆինանսական մուտքերը						նյութական ծախսեր	ոչ նյութական ծախսությունների վճարումներ	գործառնական ծախսեր	աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	կարտադիր սոցիալական վճարումներ	գրադարանային ֆոնդի համալրման	հիմնավերամրոցման, գույքի և սարքավորումների ձեռք բերման		այլ
		ընդամենը	բյուջեից (պետական և համայնքային)	մվրատվություններ	վարձակալություններից	այլ եկամուտներ										
91669.9	-	91669.9	91669.9	-	-	-	91669.9	719.2	4911.6	342.8	79425.5	195.4	2053.0	383.5	3638.9	-

**5.18.4. Սպորտային կազմակերպությունների գործունեությունը 2014թ.**

2014թ. ԼՂՀ-ում գործել է 12 սպորտային կազմակերպություններ, որից 10-ը՝ մարզական դպրոց: Սպորտային կազմակերպություններում գործում է օլիմպիական և ոչ օլիմպիական մարզաձևերի 262 խումբ, այդ թվում գյուղական վայրերում՝ 65 խումբ: Մարզադպրոցներում ընդգրկված են 3334 մարզիկ (913-ը՝ աղջիկներ), այդ թվում գյուղական վայրերում՝ 795 մարզիկ (204-ը՝ աղջիկներ): Մարզիկների թիվը կազմել է 205 մարդ (36-ը՝ կանայք):

*Սպորտային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները, 2014թ.*

Սպորտաձև	Սպորտաձևի խմբերի քանակը	Խմբերում պարապողների թվաքանակը	Մարզիչ-մանկավարժների թվաքանակը
<b>Ընդամենը օլիմպիական և ոչ օլիմպիական մարզաձևերում</b>	<b>262</b>	<b>3334</b>	<b>205</b>
<i>որից՝ օլիմպիական մարզաձևեր, ընդամենը</i>	<b>196</b>	<b>2514</b>	<b>152</b>
Բասկետբոլ	29	392	18
Ազատ ոճի ըմբշամարտ	18	185	12
Չյուդո	10	102	7
Վոլեյբոլ	38	544	31
Սպորտային մարմնամարզություն	1	12	1
Աթլետիկա	13	144	12
Ձեռքի գնդակ	20	267	16
Սեղանի թենիս	26	257	18
Ֆուտբոլ	25	462	29
Բռնցքամարտ	10	71	4
Թաեքվոնդո	6	78	4
<b>ոչ օլիմպիական մարզաձևեր, ընդամենը</b>	<b>66</b>	<b>820</b>	<b>53</b>
Ակրոբատիկա	4	103	2
Սամբո- ըմբշամարտ	8	88	6
Շախմատ	35	382	32
Սպորտային պարեր	3	50	1
Կարատե	7	87	6
Ուշու	8	100	5
Բիլիարդ	1	10	1

ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՀՀ-ում և այլ երկրներում անցկացված միջազգային մրցաշարերի մասնակիցների և մրցանակակիրների թվաքանակն ըստ մարզածների, 2014թ.

Սպորտաձև	ՀՀ				ՌԳ				Իրան			
	մարզամրցումների մասնակիցներ	մրցանակակիրներ			մարզամրցումների մասնակիցներ	մրցանակակիրներ			մարզամրցումների մասնակիցներ	մրցանակակիրներ		
		I տեղ	II տեղ	III տեղ		I տեղ	II տեղ	III տեղ		I տեղ	II տեղ	III տեղ
<b>Ընդամենը օլիմպիական մարզածներ</b>	<b>773</b>	<b>29</b>	<b>42</b>	<b>47</b>	<b>5</b>	<b>3</b>	-	-	<b>1</b>	-	-	-
Բասկետբոլ	81	-	2	-	-	-	-	-	-	-	-	-
Ազատ ոճի ըմբշամարտ	80	4	6	10	-	-	-	-	-	-	-	-
Հ/Հ ըմբշամարտ	6	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Չյուդո	51	4	6	15	-	-	-	-	-	-	-	-
Վոլեյբոլ	78	1	-	1	-	-	-	-	-	-	-	-
Ատլետիկա	235	11	14	7	-	-	-	-	-	-	-	-
Ձեռքի գնդակ	132	-	3	1	-	-	-	-	-	-	-	-
Սեղանի թենիս	28	-	2	3	-	-	-	-	-	-	-	-
Թաեքվոնդո	37	6	4	9	-	-	-	-	1	-	-	-
Բռնցքամարտ	45	3	5	1	5	3	-	-	-	-	-	-
Խճուղային հեծանվավազք	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Առագաստային սպորտ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Հրաձգություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

Սպորտաձև	Թուրքիա				Ֆրանսիա				Վրաստան			
	մարզամրցումների մասնակիցներ	մրցանակակիրներ			մարզամրցումների մասնակիցներ	մրցանակակիրներ			մարզամրցումների մասնակիցներ	մրցանակակիրներ		
		I տեղ	II տեղ	III տեղ		I տեղ	II տեղ	III տեղ		I տեղ	II տեղ	III տեղ
<b>Ընդամենը օլիմպիական մարզածներ</b>	<b>7</b>	-	-	-	<b>12</b>	-	<b>1</b>	-	<b>17</b>	-	-	<b>4</b>
Բասկետբոլ	6	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ազատ ոճի ըմբշամարտ	1	-	-	-	-	-	-	-	11	-	-	4
Չյուդո	-	-	-	-	-	-	-	-	1	-	-	-
Վոլեյբոլ	-	-	-	-	11	-	1	-	-	-	-	-
Ատլետիկա	-	-	-	-	-	-	-	-	4	-	-	-
Ձեռքի գնդակ	-	-	-	-	-	-	-	-	1	-	-	-
Սեղանի թենիս	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-
Ֆուտբոլ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Բադմինտոն	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Թաեքվոնդո	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Բռնցքամարտ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Խճուղային հեծանվավազք	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

Ոչ օլիմպիական մարզածներ

	ՀՀ				ՌԳ				Վրաստան			
	մարզամրցումների մասնակիցներ	մրցանակակիրներ			մարզամրցումների մասնակիցներ	մրցանակակիրներ			մարզամրցումների մասնակիցներ	մրցանակակիրներ		
		I տեղ	II տեղ	III տեղ		I տեղ	II տեղ	III տեղ		I տեղ	II տեղ	III տեղ
<b>Ընդամենը ոչ օլիմպիական մարզածներ</b>	<b>275</b>	<b>56</b>	<b>38</b>	<b>28</b>	<b>41</b>	<b>1</b>	-	<b>1</b>	<b>51</b>	<b>11</b>	<b>1</b>	<b>4</b>
Սամբո -ըմբշամարտ	95	7	6	8	34	1	-	1	13	-	-	-
Շախմատ	36	1	-	1	3	-	-	-	5	-	-	1
Քիկ-բոքսինգ	20	16	2	1	-	-	-	-	6	4	-	2
ՈՒՆՈ	40	19	14	4	-	-	-	-	14	7	1	1
Ուժային եռամարտ	16	6	6	1	-	-	-	-	-	-	-	-
Կիոկուշին-կան կարատե-րո	45	6	10	13	1	-	-	-	-	-	-	-
Կոխ ըմբշամարտ ազգային մարտական	-	-	-	-	-	-	-	-	13	-	-	-
Մարտեր առանց կանոնների	5	1	-	-	-	-	-	-	-	-	-	-

**ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

	ՀՀ			ՌԳ			Վրաստան					
	մարզա- մրցում- ների մասնա- կիցներ	մրցամակակիրներ			մարզա- մրցում- ների մասնա- կիցներ	մրցամակակիրներ			մարզա- մրցում- ների մասնա- կիցներ	մրցամակակիրներ		
		I տեղ	II տեղ	III տեղ		I տեղ	II տեղ	III տեղ		I տեղ	II տեղ	III տեղ
Բիլիարդ	12	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Շոտոկան կարատե	6	-	-	-	3	-	-	-	-	-	-	-
Պատերիֆտինգ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

	Ռուսինիա			Իսպանիա			Ղազախստան					
	մարզա- մրցում- ների մասնա- կիցներ	մրցամակակիրներ			մարզա- մրցում- ների մասնա- կիցներ	մրցամակակիրներ			մարզա- մրցում- ների մասնա- կիցներ	մրցամակակիրներ		
		I տեղ	II տեղ	III տեղ		I տեղ	II տեղ	III տեղ		I տեղ	II տեղ	III տեղ
<b>Ընդամենը ոչ օլիմպիական մարզաձևեր</b>	<b>5</b>	<b>1</b>	-	-	<b>4</b>	<b>1</b>	-	-	<b>9</b>	-	<b>2</b>	-
Սամբո-ըմբշամարտ	5	1	-	-	4	1	-	-	5	-	-	-
Շախմատ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
ՈՒՀու	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Բիլիարդ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Կոխ ըմբշամարտ ազգային մարտական	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Կարատե ավանդական	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Կիոկուշին-կան կարատե -դո	-	-	-	-	-	-	-	-	4	-	2	-
Պատերիֆտինգ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

	Ճայտնիա			Հարավային Կորեա			ԱՄԷ					
	մարզա- մրցում- ների մասնա- կիցներ	մրցամակակիրներ			մարզա- մրցում- ների մասնա- կիցներ	մրցամակակիրներ			մարզա- մրցում- ների մասնա- կիցներ	մրցամակակիրներ		
		I տեղ	II տեղ	III տեղ		I տեղ	II տեղ	III տեղ		I տեղ	II տեղ	III տեղ
<b>Ընդամենը ոչ օլիմպիական մարզաձևեր</b>	<b>6</b>	<b>1</b>	-	<b>1</b>	<b>3</b>	-	-	-	<b>2</b>	-	-	-
Սամբո- ըմբշամարտ	5	1	-	1	3	-	-	-	-	-	-	-
Շախմատ	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-
ՈՒՀու	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Բիլիարդ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Քիկ-բոքսինգ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Կոխ ըմբշամարտ ազգային մարտական	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Կարատե ավանդական	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Կիոկուշին-կան կարատե -դո	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Պատերիֆտինգ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

	Լիտվա			Շվեյցարիա			Չինաստան					
	մարզա- մրցում- ների մասնա- կիցներ	մրցամակակիրներ			մարզա- մրցում- ների մասնա- կիցներ	մրցամակակիրներ			մարզա- մրցում- ների մասնա- կիցներ	մրցամակակիրներ		
		I տեղ	II տեղ	III տեղ		I տեղ	II տեղ	III տեղ		I տեղ	II տեղ	III տեղ
<b>Ընդամենը ոչ օլիմպիական մարզաձևեր</b>	<b>3</b>	<b>1</b>	-	-	<b>4</b>	-	-	-	<b>3</b>	<b>1</b>	<b>1</b>	-
Սամբո- ըմբշամարտ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Շախմատ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Քիկ-բոքսինգ	3	1	-	-	-	-	-	-	-	-	-	-
ՈՒՀու	-	-	-	-	-	-	-	-	3	1	1	-

**ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

	Լիտվա			Շվեյցարիա			Չինաստան				
	մարզա-մրցումների մասնակիցներ	մրցանակակիրներ			մարզա-մրցումների մասնակիցներ	մրցանակակիրներ					
		I տեղ	II տեղ	III տեղ		I տեղ	II տեղ	III տեղ			
Բիլիարդ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Կոխ ըմբշամարտ ազգային մարտական	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Կարատե ավանդական	-	-	-	-	4	-	-	-	-	-	-
Կիոկուշին-կան կարատե -դո	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Պատերիֆտինգ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

	Հունաստան			
	մարզա-մրցումների մասնակիցներ	մրցանակակիրներ		
		I տեղ	II տեղ	III տեղ
<b>Ընդամենը ոչ օլիմպիական մարզածներ</b>	<b>5</b>	<b>-</b>	<b>1</b>	<b>-</b>
Սամբո- ըմբշամարտ	-	-	-	-
Բազկամարտ	-	-	-	-
Շախմատ	-	-	-	-
Քիկ-բոքսինգ	-	-	-	-
ՈՒՇու	-	-	-	-
Բիլիարդ	-	-	-	-
Կոխ ըմբշամարտ ազգային մարտական	-	-	-	-
Կարատե ավանդական	-	-	-	-
Կիոկուշին-կան կարատե -դո	5	-	1	-
Պատերիֆտինգ	-	-	-	-

2014թ. ՀՀ-ում և այլ երկրներում մարզական մրցույթներին մասնակցել է ԼՂՀ 1226 մարզիկ՝ նախորդ տարվա 931-ի դիմաց:

**5.18.5. Հուշարձաններ և եկեղեցիներ**

*Հուշարձաններ*

Համաձայն ԼՂՀ կառավարության առընթեր զբոսաշրջության և պետական միջավայրի պահպանության վարչության տեղեկատվության՝ ԼՂՀ տարածքում հաշվառված է մոտ 10000 հուշարձան, որից 2015թ. հունվարի 1-ի դրությամբ վկայագրված-փաստաթղթավորված է 4325 հուշարձան:

*Վկայագրված-փաստաթղթավորված հուշարձանների քանակն ըստ շրջանների*

Շրջաններ	Հուշարձաններ, ընդամենը	Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ
<b>Ընդամենը</b>	<b>4325</b>	<b>100.0</b>
Ստեփանակերտ	184	4.3
Ասկերան	796	18.4
Հադրութ	364	8.4
Մարտակերտ	1390	32.1
Մարտունի	275	6.4
Շահումյան	372	8.6
Շուշի	609	14.1
Քաշաթաղ	335	7.7

*Եկեղեցիներ*

Պետական պահպանության տակ առնված ճարտարապետական հուշարձանների (ներառյալ եկեղեցիներ, վանքեր) թիվը կազմել է 1600, որից 740<sup>#</sup>-ը՝ ուսումնասիրված է:

Արցախի թեմի եկեղեցիներում 2014թ. մկրտվել է 1124 մարդ՝ նախորդ տարվա 1023 մարդու դիմաց, կատարվել է 144 պասկադրման արարողություն՝ նախորդ տարվա 76-ի դիմաց:



**5.18.6. Պարբերական մամուլ**

ԼՂՀ-ում 2014թ. հրատարակվել են 21 անուն հասարակական-քաղաքական, հեղինակային, գրական-գեղարվեստական, մանկական և գովազդային բնույթի թերթեր, որոնց ընդհանուր թվից 1-ը լույս է ընծայվում շաբաթը 2 կամ 3 անգամ, 2-ը՝ շաբաթը 1 անգամ և 18-ը՝ անկանոն:

*Թերթերի հրատարակությունն ըստ պարբերականության և լեզուների 2013/2014թթ.*

	Ընդամենը		Պարբերականությունը					
			այդ թվում՝					
			շաբաթը 2 կամ 3 անգամ		շաբաթը 1 անգամ		անկանոն	
2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	
<b>Պարբերականների քանակը</b>	<b>20</b>	<b>21</b>	<b>1</b>	<b>1</b>	<b>1</b>	<b>2</b>	<b>18</b>	<b>18</b>
<i>հայերեն</i>	19	20	-	1	1	1	18	18
<i>հայերեն և ռուսերեն</i>	1	1	1	-	-	1	-	-
<i>ռուսերեն</i>	-	-	-	-	-	-	-	-

**5.18.7. Պետական արխիվի գործունեությունը**

2014թ. ԼՂՀ պետական արխիվի պահպանության ապահովման, գիտատեղեկատու ապարատի ստեղծման և զարգացման, փաստաթղթերի համալրման և փորձագիտական արժեքման, ինչպես նաև դրանց օգտագործման և հրատարակման մասին ցուցանիշները ստացվել են «ԼՂՀ պետական արխիվ» ՊՈԱԿ-ից և ներկայացված են ստորև բերված աղյուսակներում:

*Պետական արխիվի փաստաթղթերի պահպանության ապահովում*

	Փաստաթղթերի ֆիզիկական պահպանության ապահովում	
	Վերականգնում, թերթ	Կազմապատում և կարում, գործ (պ.մ)
2013թ.	2034	1000
2014թ.	2036	4992

*Պետական արխիվի փաստաթղթերի գիտատեղեկատու ապարատի ստեղծում և զարգացում*

Փաստաթղթերի տեսակները	Փաստաթղթերի կարգավորում, (համարակալված), թերթ	Ցուցակների կատարելագործում և վերամշակում, գործ (պ.մ.)	Փաստաթղթերի քարտազում, քարտ	Տեղեկատուների պատրաստում, հատ	
Կառավարչական և անձնական ծագման փաստաթղթեր	2013թ.	48630	2696	-	-
	2014թ.	3413	364	-	-

*Պետական արխիվի փաստաթղթերի համալրում և փորձագիտական արժեքավորում*

Փաստաթղթերի տեսակները	Փաստաթղթերի ընդունում կազմակերպություններից, ձեռնարկություններից և հիմնարկներից, գործ (պ.մ.)	Փաստաթղթերի փորձագիտական արժեքավորում, գործ (պ.մ)					
		պետարխիվում պահպանվող		գերատեսչական արխիվում փաստաթղթերի կարգավորում		գործերի ցուցակների հաստատում	
		նայվել է	ոչնչացման համար առանձնացվել է	մշտական պահպանության համար	անձնակազմի վերաբերյալ գործ		
Կառավարչական և անձնական ծագման փաստաթղթեր	2013թ.	16901	16901	5113	-	-	146
	2014թ.	9981	9981	3782	-	-	-

*Պետական արխիվի փաստաթղթերի օգտագործում և հրատարակում*

	Հոդվածների, փաստաթղթերի հավաքածուների և ժողովածուների պատրաստում	Գլխում-հարցումների քանակը, հատ			Ուսումնասիրողների հետ աշխատանքի կազմակերպում	
		Ընդամենը	այդ թվում՝		ուսումնասիրողների թվաքանակը	օգտագործման համար տրված գործերի քանակը, գործ (պ.մ.)
			բեմատիկ	սոցիալ-իրավական		
2013թ.	-	1053	130	923	10	150
2014թ.	-	1258	134	1124	3	490

**5.19. Անտառտնտեսություն և անտառտնտեսական աշխատանքները 2014 թվականին**

*Անտառհատման աշխատանքները*

2014թ. ընթացքում բոլոր տեսակի անտառհատումների արդյունքում ստացվել է 76891 խոր. մետր օգտագործման համար պիտանի փայտանյութ՝ նախորդ տարվա 96237 խոր.մետրի դիմաց:

*Անտառհատման աշխատանքների ընդհանրացված ցուցանիշները, 2013-2014թթ.*

Անտառհատումների տեսակները	2013թ.			2014թ.		
	Տարածքը, հա	Ստացված փայտանյութի ծավալը, խիտ խոր. մ.		Տարածքը, հա	Ստացված փայտանյութի ծավալը, խիտ խոր. մ.	
		Ընդամենը	որից՝ շինափայտ		Ընդամենը	որից՝ շինափայտ
<b>Հատումներ, ընդամենը</b>	<b>3866</b>	<b>96237</b>	<b>5895</b>	<b>5824</b>	<b>76891</b>	<b>7005</b>
<i>այդ թվում՝</i>						
անտառվերականգնման լուսավորման և մաքրման նոսրացման	334	8350	5576	1021	16475	6660
անցումային	115	877	-	80	466	-
նոսրացման	25	250	139	55	588	215
անցումային	1263	21477	30	2410	24874	-
սանիտարական	2100	52445	109	2250	34375	130
թափուկից	-	11964	41	-	-	-
այլ	29	874	-	8	113	-

Մթերված փայտի 9.1 տոկոսը կազմել է շինանյութը: Հաշվետու ժամանակաշրջանում այլ անձանց կողմից մթերվել է 31913 խոր. մետր փայտանյութ:

*Անտառխախտումներն ըստ ուղղությունների, 2014թ.*

	<i>/միավոր/</i>	
	ակտերի քանակը, միավոր	Ընդամենը
Ապօրինի անտառհատումներ	5	14
	ժառերի քանակը, միավոր	
Անասունների չթույլատրված արածեցում	-	-
	գլխաքանակը, միավոր	
Հողազավթում	-	-
	տարածքը, միավոր	
Անօրինական խտտում և այլն	-	-
	տարածքը, միավոր	

2014թ. ընթացքում «Արցախանտառ» ՊՈԱԿ-ի ներկայացրած ամփոփ տվյալների համաձայն, հայտնաբերվել և ակտավորվել են ապօրինի անտառհատման 5 դեպք՝ նախորդ տարվա 7-ի դիմաց:

*Անտառխախտումների գործերի շարժն ըստ տեսակների, 2014թ.*

	Ընդամենը	<i>այդ թվում՝</i>		
		ապօրինի անտառհատում	անասունների չթույլատրված արածեցում	անօրինական խտտում և այլն
Հանձնվել է հետաքննության	5	5	-	-
այդ թվում՝ <i>հարուցվել է</i>	-	-	-	-
<i>մերժվել է</i>	-	-	-	-
<i>կարճվել է</i>	-	-	-	-
<i>նշանակվել է տույժ</i>	-	-	-	-

**5.20. Բնակլիմայական երևույթներ**

Սեյսմիկ իրավիճակը, 2014թ.

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «ՍՊԱԾ» գործակալության «Արևելյան ծառայության» ՊՈԱԿ-ի ներկայացված տվյալների՝ 2014թ. տարածաշրջանում արձանագրվել են 156 ստորերկրյա ցնցումներ՝ 2013թ. 269-ի փոխարեն, որոնցից 10-ը՝ ԼՂՀ տարածքում (2013թ.՝ 13): Երկրաշարժերը հանրապետությունում արձանագրվել են հունվար (1 ցնցում), մարտ (1 ցնցում), մայիս (1 ցնցում), հունիս (2 ցնցում), հուլիս (1 ցնցում), օգոստոս (2 ցնցում), սեպտեմբեր (2 ցնցում) ամիսներին:

Արձանագրված ստորերկրյա ցնցումները 2014թ.

Ամիս	Ամսաթիվ	Արձանագրված ստորերկրյա ցնցումների թիվը	Էպիկենտրոնը	ՌԲժգնությունը էպիկենտրոնում (քալ ըստ EMS-98 սաղրակի)	ՌԲժգնությունը հանրապետության ներսում (քալ ըստ EMS-98 սաղրակի)
Հունվար	02	1	Իրան	2-3	1
	09	1	Ադրբեջան	3-4	1
	10	1	Ադրբեջան	6-7	4-5
	11	1	Իրան	3-4	1
	14	1	Թուրքմենիստան	6-7	-
	16	1	Ադրբեջան	2-3	1
	18	1	ԼՂՀ	2-3	2-3
	19	1	Ադրբեջան	3-4	2-3
	20	1	Վրաստան	3-4	-
	25	1	Ադրբեջան	3-4	1
	27	1	Հայաստան	2-3	1
	28	2	Ադրբեջան Ադրբեջան	3-4 3-4	1-2 2-3
	29	1	Ադրբեջան	3-4	1-2
Փետրվար	02	1	Իրան	2-3	-
	03	3	Դաղստան Իրան Ադրբեջան	4-5 4-5 2-3	2-3 2-3 1-2
	05	1	Իրան	2-3	-
	06	1	Ադրբեջան	2-3	1
	10	1	Ադրբեջան	6-7	5-6
	16	1	Ադրբեջան	3-4	1-2
	17	1	Իրան	2-3	-
	18	1	Թուրքիա	6-7	4-5
	25	1	Իրան	3-4	1
	26	2	Իրան Ադրբեջան	2-3 4-5	- 2-3
	27	2	Ադրբեջան Ադրբեջան	5-6 4-5	3-4 2-3
28	2	Ադրբեջան Թուրքիա	2-3 2-3	- -	
Մարտ	02	1	Ադրբեջան	2-3	-
	09	1	Իրան	4-5	1-2
	15	2	Ադրբեջան Ադրբեջան	4-5 5-6	- 2-3
	19	1	Իրան	2-3	-
	23	3	Ադրբեջան ԼՂՀ Հայաստան	2-3 2-3 3-4	2-3 2-3 1
	24	1	Ադրբեջան	3-4	1
	28	1	Հայաստան	3-4	1-2
	30	1	Իրան	5-6	4-5
Ապրիլ	04	1	Իրան	3-4	1-2
	05	1	Իրան	4-5	2-3
	06	1	Իրան	4-5	2-3
	08	1	Թուրքիա	3-4	1
	14	1	Իրան	2-3	-
	25	1	Իրան	2-3	-
27	1	Իրան	2-3	-	

ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ամիս	Ամսաթիվ	Արձանագրված ստորերկրյա ցնցումների թիվը	Էպիկենտրոնը	Ուժգնությունը էպիկենտրոնում (բալ ըստ EMS-98 սաղրակի)	Ուժգնությունը հանրապետության ներսում (բալ ըստ EMS-98 սաղրակի)
	30	2	Իրան Թուրքիա	2-3 3-4	- -
Մայիս	06	2	ԼՂՀ Ադրբեջան	2-3 2-3	2-3 1-2
	07	1	Հայաստան	2-3	1
	08	1	Իրան	4-5	2-3
	11	1	Ադրբեջան	2-3	1
	13	1	Իրան	2-3	-
	15	4	Ադրբեջան Իրան Հայաստան Դաղստան	2-3 3-4 2-3 4-5	- 1 1-2 1
	21	2	Ադրբեջան Թուրքիա	2-3 3-4	1-2 -
	23	1	Ադրբեջան	4-5	2-3
	26	1	Հայաստան	4-5	1-2
	27	1	Թուրքիա	5-6	3-4
	30	1	Ադրբեջան	2-3	-
	Հունիս	07	1	Կասպից ծով	5-6
09		1	ԼՂՀ	2-3	2-3
11		1	Իրան	4-5	2-3
12		2	Ադրբեջան ԼՂՀ	2-3 3-4	1-2 3-4
27		1	Ադրբեջան	2-3	-
29		1	Ադրբեջան	5-6	4-5
30		1	Հայաստան	2-3	-
Հուլիս	02	1	Վրաստան	3-4	-
	31	2	Կասպից ծով ԼՂՀ	8-9 4-5	- 4-5
Օգոստոս	05	1	Իրան	3-4	1
	06	1	Վրաստան	4-5	2
	07	2	Ադրբեջան Իրան	5-6 3-4	3-4 1-2
	08	1	Իրան	5-6	4-5
	10	1	Ադրբեջան	3-4	1-2
	11	2	ԼՂՀ Իրան	2-3 2-3	2-3 1
	13	1	Իրան	2-3	-
	22	2	Իրան Իրան	3-4 2-3	- -
	24	1	Ադրբեջան	3-4	1
	25	1	Վրաստան	3-4	-
	26	1	Ադրբեջան	2-3	1
	27	3	Ադրբեջան Ադրբեջան ԼՂՀ	3-4 3-4 2-3	1 1 2-3
	30	2	Ադրբեջան Ադրբեջան	4-5 2-3	3-4 -
	31	1	Իրան	2-3	1
	Սեպտեմբեր	01	1	Ադրբեջան	5-6
06		1	Իրան	4-5	-
10		2	Իրան Ադրբեջան	4-5 2-3	2-3 -
11		1	Հայաստան	1-2	-
16		2	Իրան Ադրբեջան	4-5 2-3	- -
18		2	Իրան Ադրբեջան	2-3 5-6	- 3-4

**ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

Ամիս	Ամսաթիվ	Արձանագրված ստորերկրյա ցնցումների թիվը	Էպիկենտրոնը	ՌԻժմությունը էպիկենտրոնում (բալ ըստ EMS-98 սաղրակի)	ՌԻժմությունը հանրապետության մերսում (բալ ըստ EMS-98 սաղրակի)
	21	2	Իրան Իրան	3-4 2-3	1-2 -
	22	1	Ադրբեջան	3-4	1-2
	27	2	Հայաստան ԼՂՀ	3-4 2-3	1 2-3
	29	8	Ադրբեջան ԼՂՀ	6-7 2-3	5-6 2-3
			Ադրբեջան	3-4	1-2
			Ադրբեջան	4-5	2-3
			Իրան	3-4	1-2
Իրան			3-4	1-2	
Ադրբեջան	4-5	2-3			
Ադրբեջան	3-4	1-2			
Հոկտեմբեր	03	6	Ադրբեջան Իրան	4-5 3-4	2-3 1-2
			Ադրբեջան	3-4	1-2
			Ադրբեջան	3-4	1-2
			Ադրբեջան	4-5	2-3
			Ադրբեջան	3-4	1-2
	04	4	Իրան	3-4	1-2
			Ադրբեջան	5-6	3-4
			Իրան	4-5	2-3
05	2	Վրաստան Ադրբեջան	3-4 2-3	1-2 -	
06	1	Իրան	3-4	1-2	
10	2	Թուրքիա Իրան	5-6 3-4	3-4 1-2	
16	1	Ադրբեջան	3-4	1	
22	2	Ադրբեջան Ադրբեջան	3-4 3-4	1 1	
31	1	Ադրբեջան	3-4	1-2	
Նոյեմբեր	13	1	Ադրբեջան	3-4	1-2
	23	1	Իրան	3-4	1-2
	26	2	Իրան Իրան	2-3 2-3	- -
	28	1	Իրան	2-3	-
	29	1	Իրան	3-4	1
Դեկտեմբեր	01	1	Կասպից ծով	4-5	-
	03	1	Իրան	3-4	1
	06	1	Ադրբեջան	3-4	2
	10	1	Վրաստան	4-5	-
	13	1	Ադրբեջան	3-4	1-2
	15	2	Իրան	3-4	1-2
			Իրան	4-5	2-3
	23	1	Վրաստան	4-5	2
	24	1	Ադրբեջան	2-3	1
25	1	Իրան	3-4	1-2	
31	1	Հայաստան	4-5	2	

**ԼՂՀ տարածքի հիդրոոդերևութաբանական պայմանների բնութագիրը 2014թ.**

ԼՂՀ կառավարությանն առընթեր փրկարար ծառայության «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տվյալների համաձայն 2014թ-ին կարելի է առանձնացնել մարտի 30-31-ի ջերմաստիճանի նվազումը և հուլիս, օգոստոս ամիսներին հանրապետության տարածքում դիտված երաշտը, որը ուղղակի վնաս հասցրեց գյուղատնտեսությանը: Հուլիս ամսում տեղումների քանակը կազմել է նորմայի 41-59%, իսկ օգոստոս ամսում կարելի է ասել, որ համարյա տեղումներ չեն տեղացել, նույն ամսում օդի առավելագույն ջերմաստիճանը բարձրացել է մինչև 37-40%:

**ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

Ստեփանակերտում օդի միջին տարեկան ջերմաստիճանը եղել է 13-16<sup>0</sup>C, որը 2-3%-ով բարձր է բազմամյա միջին արժեքից կամ 0.3-0.8<sup>0</sup>C-ով բարձր քան 2013թ-ին: Օդի առավելագույն ջերմաստիճանը ցերեկային ժամերին բարձրացել է մինչև 37-40<sup>0</sup>C, իսկ 2013թ-ին 32-37<sup>0</sup>C: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը գիշերային ժամերին իջել է մինչև -10-15<sup>0</sup>C, իսկ 2013-ին՝ -4-8<sup>0</sup>:

Ստեփանակերտում հողի մակերևույթի ջերմաստիճանը իջել է մինչև-18<sup>0</sup>C, հարաբերական խոնավությունը կազմել է 67% (նորման 69%), իսկ մթնոլորտային ճնշումը՝ 693մմ սնդիկի սյուն, հունվար, փետրվար ամիսներին 33 օր դիտվել է հողի առցակալում և հասել է մինչև 8սմ խորության:

Ձմեռվա ամիսներին հանրապետության տարածքում ձյան բարձրությունը Ստեփանակերտում, Ասկերանում և Մարտակերտում հասել է 6-10սմ, Մարտունիում և Հաղրուքում՝ 30-48սմ:

Մարտի 13-ին, 17-ին, 29-ին, 30-ին, մայիսի 2, 13, 27-ին, հունիսի 1-ին, հոկտեմբերի 26-ին, նոյեմբերի 3-ին շրջանների մեծ մասում դիտվել է ուժեղ քամի 17-20մ/վրկ ուժգնությամբ, որը պատճառ դարձավ մի շարք ավերումների՝ շենքերի տանիքների վնասվածքներ, կտրատված ծառեր:

27 անգամ դիտվել է կարկտահարման դեպք, մայիսի 16, 19, 31-ին՝ 19-25մմ տրամագծով, իսկ մնացած օրերին՝ փոքր չափսերի:

Գոյացած կարկտաբեր ամպերի, կարկուտի կանխման համար “Չենիթ”-ների տեղակայված տարածքները կարկտահարումից փրկելու համար 7974 անգամ գործարկվել են հակակարկտային կայանները, որը 285-ով քիչ է քան 2013թ-ին:

**5.21. Բնակարանային տնտեսություն**

2014թ. տարեվերջին ԼՂՀ-ում առանձնատների և բնակարանների քանակը, ըստ ներկայացված հաշվետվությունների, կազմել է 43475 միավոր, որից 31190-ը կամ 71.7 տոկոսը՝ առանձնատներն են: Առանձնատների և բնակարանների ընդհանուր մակերեսը կազմել է 3806.4 հազ. քառ. մետր, որից բնակելի մակերեսը՝ 2346.8 հազ. քառ. մետր կամ ընդհանուր մակերեսի 61.7 տոկոսը:

*ԼՂՀ բնակարանային ֆոնդն ըստ շրջանների 2015թ. հունվարի 1-ի դրությամբ*

	Ընդամենը			Բնակարաններ			Առանձնատներ		
	Բնակարաններ և առանձնատներ, միավոր	Ընդհանուր մակերեսը	որից՝ բնակելի մակերեսը	Ընդամենը, միավոր	Ընդհանուր մակերեսը	որից՝ բնակելի մակերեսը	Ընդամենը, միավոր	Ընդհանուր մակերեսը	որից՝ բնակելի մակերեսը
<b>Ընդամենը</b>	<b>43475</b>	<b>3806.4</b>	<b>2346.8</b>	<b>12285</b>	<b>710.1</b>	<b>477.6</b>	<b>31190</b>	<b>3096.3</b>	<b>1869.2</b>
ք. Ստեփանակերտ	13168	1022.7	586.0	8951	505.6	353.6	4217	517.1	232.4
Ասկերան	5249	494.8	312.5	253	16.1	10.9	4996	478.7	301.6
Հաղրուք	3836	324.8	245.9	389	23.4	14.9	3447	301.4	231.0
Մարտակերտ	7410	592.3	395.2	627	36.8	21.7	6783	555.5	373.5
Մարտունի	7821	782.9	438.7	453	24.5	13.4	7368	758.4	425.3
Շահումյան	902	106.2	69.0	24	2.2	1.2	878	104.0	67.8
Շուշի	2173	218.9	127.7	1258	88.3	52.0	915	130.6	75.7
Քաշաբաղ	2916	263.8	171.8	330	13.2	9.9	2586	250.6	161.9

*Ընդհանուր և բնակելի մակերեսով ապահովվածությունն մեկ բնակչի հաշվով ըստ շրջանների 2015թ. հունվարի 1-ի դրությամբ*

	Ընդհանուր մակերեսով	Բնակելի մակերեսով
<b>Ընդամենը ԼՂՀ</b>	<b>25.6</b>	<b>15.8</b>
ք. Ստեփանակերտ	18.5	10.6
Ասկերան	27.4	17.3
Հաղրուք	23.8	18.0
Մարտակերտ	29.8	19.9
Մարտունի	32.2	18.0
Շահումյան	34.4	22.4
Շուշի	40.2	23.5
Քաշաբաղ	28.2	18.4

ԼՂՀ-ում մեկ բնակչի հաշվով ընդհանուր և բնակելի մակերեսով ապահովվածությունը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, ընդհանուր առմամբ, կազմել է համապատասխանաբար՝ 25.6 քառ.մետր և 15.8 քառ.մետր:

**Հյուրանոցային տնտեսության գործունեությունը**

Ըստ հյուրանոցների գործունեության մասին հաշվետվությունների տվյալների 2015թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գործել է 33 հյուրանոց՝ 1286 տեղ միաժամանակյա տարողությամբ: Ընդ որում՝ Ստեփանակերտ քաղաքում գործել է 20 հյուրանոց՝ 842 տեղ միաժամանակյա տարողությամբ:

Հյուրանոցային տնտեսության հիմնական ցուցանիշները

Ցուցանիշներ	Չափման միավորը	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Հյուրանոցների թիվը	միավոր	21	22	24	30	29	33
Ընդհանուր տարածությունը <i>այդ թվում՝ տրված վարձակալության</i>	քառ. մ -“-	16016.5 955.4	16037.1 915.4	22700.4 951.9	28123.8 1084.5	32557.6 1348.0	34431.6 1321.5
Միաժամանակյա տարողությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	տեղ	649	774	961	1186	1208	1286
Բոլոր համարների թիվը	միավոր	300	301	426	492	548	564
Բոլոր համարների բնակելի տարածությունը	քառ. մ	6314.9	6324.4	10992.9	13183.9	13389.2	15927.5
Հյուրանոցի զբաղվածությունը հաշվետու ժամանակահատվածում <i>այդ թվում՝ արտասահմանյան քաղաքացիների կողմից</i>	տեղ-օր -“-	44000 43855	53667 53645	46237 45897	47140 46999	48042 47681	61151 50956

2014թ. ընթացքում հանրապետության հյուրանոցներում տեղերը զբաղեցվել են հիմնականում արտասահմանյան քաղաքացիների կողմից:

Գործող հյուրանոցներում ուսումնասիրվող ժամանակաշրջանի վերջին համարների թիվը կազմել է 564, որոնց բնակելի տարածությունը 15927.5 քառ. մ է, այսինքն՝ մեկ համարի բնակելի մակերեսը միջին հաշվով կազմել է 28.2 քառ. մ:

Բոլոր հյուրանոցների ընդհանուր մակերեսը 2014թ. վերջին կազմել է 34431.6 քառ. մ (նախորդ տարվա 32557.6 քառ. մ-ի փոխարեն), որից տրված է վարձակալության 1321.5 քառ. մ-ը կամ 3.8 տոկոսը:

2015թ. հունվարի 1-ի դրությամբ հյուրանոցային տնտեսությունում հիմնական գործունեությամբ զբաղվող աշխատողների թիվը կազմել է 258 մարդ:

Հյուրանոցային տնտեսության հիմնական ցուցանիշներն ըստ շրջանների, 2014թ.

Ցուցանիշներ	Ստեփանակերտ	Ասկերան	Հաղրոթ	Մարտակերտ	Մարտունի	Շուշի	/տոկոսով/
							Ընդամենը
Հյուրանոցների թիվը	61,8	2,9	5,9	17,7	2,9	8,8	100,0
Ընդհանուր տարածությունը <i>այդ թվում՝</i>	68,1	4,7	0,8	7,1	0,4	18,9	100,0
<i>տրված վարձակալության</i>	89,8	-	-	10,2	-	-	100,0
Միաժամանակյա տարողությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	65,5	7,8	2,1	10,2	1,0	13,4	100,0
Բոլոր համարների թիվը	65,4	4,4	2,7	10,5	0,9	16,1	100,0
Բոլոր համարների բնակելի տարածությունը	69,6	8,3	1,1	5,7	0,8	14,5	100,0
Հյուրանոցի զբաղվածությունը հաշվետու ժամանակահատվածում	70,7	15,8	1,1	2,9	0,3	9,2	100,0
<i>այդ թվում՝ արտասահմանյան քաղաքացիների կողմից</i>	84,1	0,0	1,3	3,3	0,2	11,1	100,0


Գազաֆիկացում

2014թ. վերջին գազի փողոցային ցանցի միագիծ երկարությունը կազմել է 1250.4 կմ՝ տարեսկզբի 1221.7 կմ-ի դիմաց: Նոր շինարարության և գործողների ընդարձակման հաշվին 2014թ. շահագործման է հանձնվել 28.7 կմ երկարությամբ գազափողովակների փողոցային ցանց, ընդ որում քաղաքներում՝ 13.2 կմ և գյուղերում՝ 15.5 կմ:

Գազի փողոցային ցանցի միագիծ երկարությունը

	Հաշվետու տարվա սկզբին	Շահագործվել է տարվա ընթացքում	Գուրս է գրվել տարվա ընթացքում	Հաշվետու տարվա վերջին
<b>Ընդամենը ԼՂՀ-ում</b>	<b>1221.7</b>	<b>28.7</b>	<b>-</b>	<b>1250.4</b>
<i>այդ թվում՝</i>				
քաղաքներում	463.0	15.5	-	478.5
գյուղերում	758.7	13.2	-	771.9

Գազի փողոցային ցանցի միագիծ երկարության կառուցվածքը  
2013-2014թթ. (%)



2015թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գազաֆիկացված բնակարանների քանակը կազմել է 27501, որից 2014թ. ընթացքում գազաֆիկացվել է 437 բնակարան (այդ թվում՝ 163-ը գյուղական վայրերում):

2014թ. սպառողներին փաստացի բաց է թողնվել 41696.6 հազ. խոր. մետր գազ, այդ թվում բնակչությանը՝ 13790.3 հազ. խոր. մետր (նախորդ տարվա 13440.0 հազ. խոր. մետրի դիմաց): Նույն ժամանակահատվածում փաստացի բաց թողնված բնական գազից 1800.0 հազ. խոր. մետրը հանդիսացել են կորուստները (2013թ.՝ 1740.0 հազ. խոր. մետր):

2014թ. ընթացքում գազաֆիկացված բնակարաններում մեկ բաժանորդի հաշվով միջինում սպառվել է 501.4 խոր. մետր գազ՝ 2013թ. 496.6 խոր. մետրի դիմաց: